326

U. Z.
151

2012

B 2001

2P2010



ՄԱՑՐԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԳՐԵՑ

ՏԻԿ. ՄԱԼԳԷՆ

Անգլերէնից թարգմանեց

ԴԱՐԵԳԻՆ ՔԱՀ. Ց. ԿԻՐԱԿՈՍԵԱՆՑ

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանքուց

Զուղա—Սպահան

1919

Ա.Հ.22.6
151

ՄԱՅՐԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵՐԵՔ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ԳՐԵՑ

ՏԻԿ. ՄԱԼԳԷՆ

Անգլերէնից թարգմանեց

ԳԱՐԵԳԻՆ ՔԱՀ. Ց ԿԻՐԱԿՈՍԵԱՆՑ

Տպարան Ս. Ամենափրկչեան Վանուց

Զուղա — Սպահան

1919

(91576-ԱՄ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

(153-2000)
(67-97)
№151
151-2012

ՄԱՅՐԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ
ԵՐԵՔ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Սոյն գրքոյկը գրուել է այն նպատակով, որ երբ խօսողը ճեռնհասութիւն չունենայ վերջին վայրկեանում, նրա դերը կատարէ, կամ թէ գործածուի ժողովներում, խօսողներ պատրաստ չը լինելու դէպքում: Կարող են նոյնութեամբ կարդալ և կամ իրրև հիմք ծառայեցնել ուելի երկար բանախօսութեան: Ուելի օգտակար դարձնելու յուսով, սկզբում և վերջում մի քանի բացատրութիւններ են տրուել, որոնք անհրաժեշտ կը լինեն մի նոր ճիւղ սկսելու դէպքում: Եթէ ճիւղն արդէն գոյութիւն ունի, հարկաւ այս բացատրական մասը պէտք չէ: Ուելորդ է ասել, որ բացի այն մասից, որ վերաբերում է ընկերութեան իսկական կազմակերպութեան գործին՝ բոլոր թելադրութիւն-

ներն ու խորհուրդները տրում են միայն օգտակար լինելու նրանց, որոնք յանձն են առնում ճիշդի ղեկավարությունը:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ

Ովքեր որ Մայրերի Միութեան մի ճիշդ բանալու մտադրութիւն ունեն, պէտք է ճշտիւ հասկանան ընկերութեան նպատակը և ուղղութիւնը, և իմանան ինչ ձևով վարել ու յառաջ տանել ըստ ծուխերի: Մայրերի միութիւնն Եկեղեցական ընկերութիւն է: Կրօնական ուղղութեամբ է հիմնուել և պաշտպանում այս երկրի եկեղեցական օրէնքը: Դրա կազմակերպութիւնը ծխական ու թեմական է և պաշտօնական գործողները պէտք է Անգլիական Եկեղեցու անդամներ լինեն:

Որ և է ճիշդ, ինչպէս և լինի, կարող է ընդունել այլազգեան անդամներ, եթէ ծխատէր երէցն իր հաւանութիւնը տայ: Ընկերութեան հիմնարկութեան օրից սկսած՝ խիստ կարևորութիւն է ընծայուել Մկրտութեան ու Ս. Հաղորդութեան երկու մեծ Խորհուրդներին և ամեն ջանք գործ պիտի դրուի անդամներին օգնելու, որպէս զի ըմբռնեն շնորհի այս միջոցների անհրաժեշտութիւնն ու օգտակարութիւնը: Անդամակցութիւնը բաց է ամուսնացած կանանց՝—

ա). Որոնք մկրտուել են և իրենց երեխաներին բերում են Ս. մկրտութեան:

բ). Որոնք ընդունում են առաքեալների հանդանակում պարունակած ուսուցումը:

գ). Որոնք հաւատարիմ են իրենց ամուսնական ուխտերին:

դ). Որոնք հաճ ու հաւան են երեք կենտրոնական նպատակներին:

Ծանօթ.—Ամուսնալուծութիւնը պէտք է արգելք համարել անդամակցութեան:

Ամուրի կանայք կարող են ընկերակիցներ լինել, որովհետև այդպիսինե-

րից շատերն մեր վերաբերելի բաւական գործեր են կատարում թէ իրենց տներում և թէ կրթական տեսակէտով:

ՄԱՅՐԵՐԻ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ընկերութեան կազմութիւնն այսքան համառօտակի պարզելուց յետոյ այժմ դառնանք նրա տնելիքի վրայ, որը լաւ բացատրում է նրա երեք նպատակներով: Այս նպատակները նոյնն են եղել ընկերութեան հիմնարկութիւնից ի վեր, և երևում են անդամակցութեան ամեն քարտի վրայ:—

1.—Բարձր պահել ամուսնութեան սրբութիւնը:

2.—Արմնացնել ամեն դասակարգի մայրերի մէջ մեծ պատասխանատուութեան գիտակցութիւն, որ իբրև մայրեր՝ պիտի ունենան կրթելու իրենց տղաներին ու աղջիկներին, որոնք պետութեան ապագայ հայրերն ու մայրերն են լինելու:

3.—Կազմակերպել ամեն տեղ մայրերի

մի խումբ, որոնք պիտի միանան աղօթքով, և անձնական օրինակով ձգտեն իրենց ընտանիքներին առաջնորդել մաքրութեամբ ու սրբակեցութեամբ:

Սրանք բովանդակում են միութեան իսկական նպատակը և ուղղութիւնը, և արտայայտում թէ ինչ պէտք է լինեն նրա անդամները և ինչ պիտի անեն: Գործը հասկանալու համար և գործադրելու մեր տներում և կեանքում, մենք պէտք է հասկանանք նրա նպատակները և իմանանք թէ ինչ ազդեցութիւն են գործելու բոլորիս վրայ: Թող այժմ մեր լուրջ ուշադրութիւնը դարձնենք նրանց վրայ և բնականաբար սկսենք առաջինով:

ԱՌԱՋԻՆ ՆՊԱՏԱԿԸ.—ՀԻՄՈՒՆՔԸ.

1.—Բարձր պահել ամուսնութեան սրբութիւնը.—Թերևս մի քանիսը զարմանան թէ ինչու այս պէտք է լինի միութեան առաջին նպատակը: Սրբեմն

այս հարցը տրուել է, և երկու պատասխան կայ դրան։

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԱՍԽԱՆ.

Նախ՝ ինչպէս որ ամէն շինութեան մէջ հիմքը կենսական նշանակութիւն ունի, և եթէ լաւ և ամուր կերպով դրուած չէ՝ շէնքն անպէտք կը լինի, այնպէս և այս ընտանեկան կեանքի մէջ, որ մենք աշխատում ենք կառուցանել, մեր ջանքերն ապարդիւն կ'անցնեն եթէ ճշմարիտ, մաքուր, անքակտելի ամուսնութեան հիմքը չը կազմէ գործի բացարձակապէս անհրաժեշտ մասը։ Այդ այն հիմքն է, որ Աստուած ինքն է դրել և սահմանել, որ ամէն ընտանեկան կեանք այդպիսով կազմակերպուի. և երբ մենք խօսում ենք ամուսնութեան սրբութեան մասին, ընդունում ենք իբրև աստուածադիր սահմանումն, որն երբէք չը պէտք է նուաստացուի Աստուծու որոշած բարձրութիւնից։ Մեր Տէրն ինքն անձամբ

խօսեց այն խորհրդաւոր բառերը, որ մենք միշտ լսում ենք Պսակի արարողութեան ժամանակ. «Զոր Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ»։ Այսպիսով Նա սահմանեց ամուսնական օրէնքի կանոնը, որը Նրա եկեղեցին միշտ էլ պահպանել է հաւատարմաբար։ Այս բաւական պէտք է լինի մեզ համար։ Մինչև անգամ հեթանոս ազգեր և մեզ ցոյց են տալիս թէ ինչպէս անհնարին է ունենալ ընտանեկան կամ ազգային կեանքի մաքրութիւն, եթէ ամուսնական կապի հետ որ և է ձևով թեթևութեամբ վերաբերուեն։ Հռովմն իր գոյութիւնն աւելի երկար ու աւելի ուժեղ կերպով պահպանեց քան Յունաստանը, որովհետև հակառակ իր ունեցած լուրջ թերութիւններին՝ նրա ամուսնական կեանքի աստիճանն աւելի բարձր ու մաքուր էր։ Երբ Հռովմայեցիք առաջին անգամ ծանօթացան մեր Տէտոն նախահայրերի հետ, նրանք ուշադրութեան առան այն կէտն, որ «այս

բարբարոս ժողովուրդը» հետևում է միակնութեան, և ամուսիններն իրենց ամբողջ կեանքում՝ հաւատարմաբար են ապրում իրար հետ։ Սրանք մեր նախահայրերն էին։ Արդեօք նոյնը կարելի է ասել նրանց այժմեան սերունդի մասին։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Այժմ անցնենք «ամուսնութեան արքութիւնը» մեր պահելու երկրորդ պատճառին։ Մենք Աստուծուց շնորհակալ կարող ենք լինել, որ մեր շուրջը գտնում են բաւական մաքուր ու հաւատարիմ ամուսնական կեանքեր, սակայն չը պէտք է ուրանալ, որ երբէք այնպիսի խախտումներ չեն եղել ամուսնական կապի, ինչպէս որ բոլորս տեսնում և լսում ենք։ Մի ուղղութեամբ ջանքեր են գործ դրում ձեռք բերելու «ամուսնալուծութեան աւելի դիւրութիւններ», այնպէս որ մարդիկ կարողանան մտնել ամուսնական լծի տակ և հնար եղածին չափ դիւրութեամբ քակտել նրա կապը, և

որովհետև աշխարհում շատ տխուր և ապերջանիկ ամուսնութիւններ են լինում, բարեսիրտ մարդիկ պակաս չեն գտնում պաշտպան հանդիսանալու յիշեալ ջանքերին, անտես անելով այն իրողութիւնը, որ նրանք մարդկանց, կանանց ու երեխաների համար աւելի չարիք կ'ստեղծեն քան բարիք։ Բանախօսները դատապարտում են ամուսնական կապը, համարելով բարբարոս և անգութ։ Բազմաթիւ գրքեր ու թատերագրութիւններ ծաղրի ու արհամարհանքի առարկայ են դարձնում դրան։ Ամուսնութեան օրէնքը խախտում է զանազան ձևերով, բոլորը վերագրելի ինքնազսման ու ինքնակրթութեան բացակայութեան, որ դժբախտաբար ընդհանուր է ներկայ օրերս։

ԻՆՉՊԷՍ ԴԻՄԱԴՐԵԼ ԱՅՍ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Ի՞նչ ենք կարող մենք՝ Մայրերի միութեան անդամներս՝ անել, իրերի այս թշուառ կացութեան հանդէպ։

Մենք շատ բան կարող ենք անել անհատաբար, դեռ էլ աւելի՝ հաւաքաբար, որովհետև այժմ մի մեծ խումբ ենք կազմում, որը կարող է ուժեղ կերպով ազդել հասարակական կարծիքի վրայ և հետզհետէ բարձրացնելով՝ աւելի տոն տալ ամբողջ խնդրին: Մենք պիտի դժկամակենք այն ծանօթներին ու խօսողներին, որոնց կարծիքն ամուսնութեան մասին սխալ հասկացողութեան հիման վրայ է, և պիտի խորշենք այն գրքերից ու թատերագրութիւններից, որոնց նպատակն է ամուսնական կեանքի անհաւատարմութիւնը զուարճալի կամ հիացմունքի արժանի համարել: Հէնց որ մեր տղաներն ու աղջիկները հասակ առնեն՝ պիտի սովորեցնենք նրանց ազնուաբար ու լրջօրէն մտածել ամուսնութեան և նրա նշանակութեան մասին, և հասկացնել թէ ինչեր կարող են ծագել կամ չը ծագել իրենց ընտրութիւնից: Այս բոլորից վեր բարձրանում է բոլոր ծնողների վրայ ծանրացած այն մեծ պարտականութիւնը, որ իրենց ծաղկահասակ երեխաներին, ընտանեկան կեանքում, ցոյց տան թէ ինչ կարող է ամուսնական կեանքը լինել և պէտք է լինի: Ամեն փոքրիկ երեխայի գաղափարն ամուսնական կեանքի մասին բնականաբար այն է՝ ինչ որ տեսնում է հօր ու մօր վերաբերմամբ, և կանուխ ստացած տպաւորութիւնը մնում է և կեանքի ուղղութիւն դնում: Եթէ մեր երեխաների յիշողութիւնը իրենց տան մասին այն լինի, որ իրենց ծնողները համերաշխ էին ապրում՝ միմեանց առաջնորդելով ու խրախուսելով կեանքի բոլոր ուրախութիւնների և տխրութիւնների միջոցում, հաւատարմաբար ծառայում Աստուծուն և իրենց երեխաներին ևս դաստիարակութեամբ ու կենդանի օրինակով ղեկավարում դէպի Նա, այն ժամանակ նրանց ամբողջ կեանքի ընթացքում ամուսնութեան մասին կազմած գաղափարատիպը (իդէալը) բարձր

կը լինի, և գժուարութիւն չեն ունենալ հասկանալու թէ ինչ է նշանակում «ամուսնութեան սրբութիւնը»։

Այստեղ յարմար առիթ չէ շօշափելու այն մեծ չարիքները կապուած ամուսնական կեանքի հետ, որ այժմեան համարձակախօսութիւնը մեզ իրաղեկ է կացուցանում, բայց իսկապէս նրանք երևան են բերում բարոյական ու հոգեկան վերին աստիճանի ապականութիւն, որի դէմ քրիստոնեայ մարդիկ ու կանայք պիտի մաքառեն իրենց ազդեցութեան բոլոր ուժերով, թէ ներում և թէ դրսերում։ Մինչև անդամ բացի այս մեծ ու սոսկալի խնդիրներից՝ մենք բոլորս տեղեակ պիտի լինենք այն թեմև, լիսի վերաբերմունքին, որ ունեն դէպի ամուսնութիւնը, և գիտակ՝ նրա վսեմ կողմերի հանդէպ ցոյց տուած անտարբերութեանը, որն անհետացնում է ամուսնական կապի սրբութեան մասին կազմած գաղափարը։ Մայրերի միութիւնը

կոչ է անում իր անդամներին անսասան մնալ Ս. Պատկի մասին ծագած բոլոր այս չար ու թիւր գաղափարների դէմ, և մենք աղօթում ենք, որ Աստուած շնորհ պարգևէ մեր Պետութեան ամեն մի ամուսնացած մարդու և կնոջ՝ հասկանալու և բարձր պահելու «ամուսնական սրբութիւնը»։

ԵՐԿՐՈՐԴ ՆՊԱՏԱԿԸ. ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՈՒԹԻՒՆ

Մեր երկրորդ նպատակը թէև մասամբ հեշտ է երևում, սակայն ի՞նչքան շատ նշանակութիւն ունի։ «Արթնացնել ամէն դասակարգի մայրերի մէջ մեծ պատասխանատուութեան գիտակցութիւն, որ իբրև մայրեր պիտի ունենան կրթելու իրենց տղաներին ու աղջիկներին, որոնք պետութեան ապագայ հայրերն ու մայրերն են լինելու»։

Երեխաների դաստիարակութիւնը, մանկական հասակում տածած ամենօրեայ արթուն խնամքը, չափահաս ժամանակներում ցոյց տուած իմաս-

ութիւնն ու վարուելակերպը, ինքնազսպումն, հեռատեսութիւնն ու շըրջահայեցողութիւնը, որոնք անհրաժեշտ են մեր ընտանեկան կեանքում.—այս բոլորը մտնում են «մեծ պատասխանատուութիւն» կոչուած կարգի մէջ, և մասն կազմում այն գործի, որ բոլոր ծնողները, յատկապէս մայրերը, կոչուած են յանձն առնելու, երբ երեխաները մուտ են գործում ընտանիքի մէջ, որ առանց նրանց այն՞քան դատարկ պիտի լիներ:

Այս կրթութիւնը հետևանք է ընտանեկան ամբողջ կեանքի ազդեցութեանն՝ ընտանիքում կրթուող երեխաների վրայ, և հետևաբար մեզանից կախումն ունի: Աստուծուց մեզ շնորհած մի հրաշալի գործ է, որ կազմակերպում է նկարագիրը (բնաւորութիւնն): «Գործ ցանիր և սովորութիւն հնձիր, սովորութիւն ցանիր և նկարագիր հնձիր»: Այս պիտի լինի ամէն մօր նշանաբանը, որովհետև ամենօրեայ

սովորութիւնները ձևակերպում են փոքրերի նկարագիրը թէ լաւ և թէ վատ, որը տևում է մինչև կեանքի վերջը: Երեխաների մէջ լաւ սովորութիւնների համբերատար ու յարատև ձևակերպումով է, որ մայրերը նրանց դարձընում են—համաձայն մեր մկրտութեան արարողութեան մէջ գործ ածուած բառերի՝ «Քրիստոսի հաւատարիմ զինուորներն ու ծառաները մինչև կեանքի վախճանը»: Այս նպատակով անդամակցութեան Քարտը բոլորիս համար մեծ արժէք պիտի ունենայ, որովհետև նրա պարունակող կանոնները կամ լաւ ևս՝ խրատները ցոյց են տալիս այն ուղղութիւնը, որով երեխան պիտի կրթուի, և ներշնչում են օգտակար թելադրութիւններ:

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԵԱՆ ՔԱՐՏԸ.

Սրանք են Մայրերի Միութեան առաջադրած ուղղութիւնը, ինչպէս որ ծրագրուած է մեր Քարտերի վրայ,

և լուսաբանում նպատակները։ Նախ գրուած են երկու լուրջ յիշեցուցիչներ, թէ կնութիւնն ու մայրութիւնը ինչ խոստում են պահանջում մեզանից մեր կացութեան ու անելիքի մասին։

ա). Ես ցանկանում եմ խոստովանել, որ իմ ամուսնական ուխտով ես խոստացել եմ սիրել, օգնել և հաւատարիմ մնալ իմ ամուսնուս մինչև կեանքի վախճանը։

բ). Ես ցանկանում եմ վերյիշել, որ իմ երեխաները Ս. Մկրտութեամբ՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսի անդամներն են դարձել և մարմնով ու հոգով նուիրուած Նրա ծառայութեանը, և իմ պարտականութիւնն է նրանց այնպէս կրթել, որ շարունակեն Նրա հաւատարիմ զինուորներն ու ծառաները լինել մինչև կեանքի վերջը։

Յետ այնու հետևում են եօթը թերադրութիւններ յ՝ուղղութիւն մեր երեխաների դաստիարակութեան, և

ապա՝ մեր աղօթքը։

Ես ցանկանում եմ Աստուծու օգնութեամբ։

1.—Պաշտպանել իմ տունը, կարողութիւնս ներածին չափ՝ անհաւատարմութեան, անմաքրութեան, անժուժկալութեան, գրաղ գալու և խաղամոլութեան վտանգներից։

2.—Սովորեցնել իմ երեխաներին ամեն օր աղօթք անել, կարդալ Ս. Գիրքը նրանց հետ, յատկապէս չորս Աւետարանները, և նրանց կրթել մեր քրիստոնէական Սուրբ հաւատի մէջ։

3.—Առաջնորդել նրանց Աստուծու օրը սուրբ պահելու, և կանոնաւորապէս Նրան երկրպագելու Նրա աղօթատան մէջ։

4.—Կրթել իմ երեխաներին հնազանդ, ճշմարտախօս, ողջախոհ, ինքնազսպուած ու աշխատասէր լինել, և գործով ու խօսքով նրանց լաւ օրինակ հանդիսանալ։

(153-2000) (67-96) 157-2012
ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

5.—Պահպանել նրանց վատ ու կասկածելի ընկերներից, ազդեցութիւններից ու զուարճութիւններից և չը խրախուսել չարախօսութիւն ու շաղակրատութիւն (բամբասանք) իմ տանը:

6.—Բծախնդիր լինել իմ տնում երևացած ու կարդացած գրքերի, պարբերական հանդէսների և թերթերի մասին:

7.—Ներշնչել յարգանքի ոգի, խրատով ու օրինակով:

Տէր Աստուած որ ես այնպէս 'ի գործ դնեմ շնորհի միջոցները, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի հետ միանալով ու հաղորդակից լինելով՝ 'ի վիճակի լինեմ իմ պարտականութիւնը կատարելու իբրև հաւատարիմ կին, և իմաստուն ու խանդակաթ մայր:

ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՂՕԹՔԸ

Ո՞վ Տէր, լցրուր ինձ Քո Սուրբ Հոգւովը, որ ես ամրապէս հաւատամ Յի-

սուս Քրիստոսին, և Նրան սիրեմ 'ի բոլոր սրտէ: Իմ հոգին լուա Նրա Պատուական Արիւնով: Այնպէս արա, որ ես մեղքն ատեմ, և սուրբ լինեմ մտքով, խօսքով ու գործով: Օգնիր ինձ հաւատարիմ կին և խանդակաթ մայր լինելու: Օրհնիր ինձ և Մայրերի Միութեան պատկանող անդամներին. միացրուր մեզ սիրոյ ու աղօթքի մէջ և մեզ սովորեցրուր մեր երեխաներին երկնքի համար կրթելու: Ս. Հոգին թափիր իմ ամուսնու և երեխաների վրայ: Մեր տունը խաղաղութեան ու սիրոյ բնակարան դարձրուր, և թող մենք աշխարհումս այնպէս կեանք վարենք, որ Քեզ հետ ապրենք ընդ միշտ երկնքում. 'ի սէր Յիսուսի: Ամէն:

Շատ տարիներ առաջ, մի երիտասարդ մայր, երբ այս կանոնները բարձրաձայն կարդացւում են նրա համար նախ քան նրա անդամագրուելը Միութեան, խոր հոգւոց հանելուց յետոյ՝ ասաց. «Երանելի օր կը լինի երեխա-

ների համար եթէ բոլորն էլ այդ ուղղութեամբ կրթուեն»։ Իրաւ որ բոլոր խելացի մարդիկ ու կանայք պիտի արձագանքեն նրա խօսքերը, և ամեն մի մայր, որ աշխատում է իր երեխաներին այդ ձևով կրթել, նպաստում է գլուխ բերելու այդ «երանելի օրը»։ Ընդհանուր առմամբ, մենք կարող ենք տեսնել, որ սկզբունքն է սովորութիւնների կազմակերպումով նկարագիր կազմել, և, իրօք, այդ սովորութիւնների վրայ է հիմնուած բոլոր նկարագիրը։ Քարտը մատնանիշ է անում լաւ սովորութիւնները, և վատերից զգուշացնում։ Բոլոր դաստիարակութիւնն այս երկուսի մէջ է կայանում—լաւ սովորութիւնների կազմութիւնը, խուսափումը վատերից։ Եւ որովհետև այս սովորութիւններն սկզբում փոքր բաներ են երևում, մենք միշտ չենք ըմբռնում թէ ինչ պատասխանութիւններ կան կապուած նրանց հետ։ Օրինակի համար, հնազանդութիւնը, առաջին սովորութիւնն որ մի երեխայ

կարող է կազմել՝ պիտի սովորեցուի, ոչ միայն նրա համար որ անհնազանդ երեխան փորձանք է անում, այլ որովհետև ինքնազսպման սովորութեան բակիզբն է, առանց որի մարդը կամ կինն անպէտք է, և որովհետև միայն երկրաւոր ծնողին հնազանդուել սովորելուց կարող է երեխան հասկանալ Երկնաւոր Հօրը հնազանդելուց առաջացած ուրախութիւնն ու երանութիւնը։ Ճշմարտախօսութիւնը նորից ոչ միայն խափանում է իսկական սուտախօսութեան հընարաւորութիւնը, այլ նաև առաջն է առնում չափազանց առասպելաբանութեան, որին շատ տղաներ ենթակայ են։ Երեխայի վերաբերմամբ յաճախ այդ անվնաս է երևում, սակայն հեշտութեամբ կարող է մտածելու և խօսելու չափազանցութեան մէջ այնպիսի չափեր ստանալ, որ ժամանակով մարդիկ իսկապէս դժուարութիւն կ'ըզգան որոշելու ճշմարտութիւնը ստախօսութիւնից, և դրանից կ'առաջանայ

ահագին վնաս թէ անհատական և թէ հանրային կեանքում: Մաքրութիւն— աւելորդ է մատնանշել, որ մի մատաղ երեխայի մաքրութիւնը, այսինքն՝ չարութեան անգիտութիւնը՝ երկար չէ կարող տևել, և անհրաժեշտ է ճատիճանաբար ու գորովանօք դրան փոխարինել այնպիսի սովորութիւններով, որ համբերութիւնն ու պարկեշտութիւնը դարձնեն երկրորդ բնութիւն, և զգուանք ներշնչել դրանց հակառակ յատկութիւնների դէմ: Այս ձևով ապագայ տարիների անհրաժեշտ կրթութեան ճանապարհը հարթւում է, և մտքի, սրտի ու խօսքի մաքրութիւնը անիրագործելի երազ չէ դառնում չափահաս մարդկանց ու կանանց համար:

ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ

Նկարագրի այս երեք մեծ հիմնաքարերը՝ Հնազանդութիւնը, Ճշմարտախօսութիւնը, Մաքրութիւնը՝ կարող են դրուել մանկական տարիներում:

Յիրաւի, եթէ այն ժամանակ չը դրրուեն, ապա հազիւ թէ յաջողուի ապագայ տարիներում: Որպէս զի իրական արժէք ունենան, սկզբից ևեթ նրանց պիտի զուգորդուին կրօնի ուսուցումն ու դաստիարակութիւնը, որոնք մօր ամենաբարձր պարտականութիւնն ու առանձնաշնորհումն են համարւում, սակայն, աւաղ, յաճախ բարձի թողի են արւում կամ յանձնւում ուրիշներին: Եթէ կրօնը դեր պիտի ունենայ մեր երեխաների կեանքի ոչ միայն արտաքին մասը շօշափելու այլ և նրանց ամբողջ նկարագիրը, ոյժն ու նեցուկը ամեն պարագաներում, նաև հանդիսանալու լինի իբրև կեանքի ղեկավարող սկզբունք և դառնայ նրանց յոյսն ու մխիթարութիւնը՝ մահուան ժամանակ, ուրեմն նոյն այդ կրօնը սկզբից այնպէս ձուլուած պիտի լինի նրանց գիտակցութեան հետ, որ բնաւ չը մտաբերեն թէ առաջին անգամ երբ են արդեօք իւրացրել այդ: Այսպիսի ուսուց-

ման սկզբնական շրջանը բաւական հեշտ է։ Ամեն մի մայր, որ նեղութիւն քաշէ, կարող է իր փոքրիկ երեխային սովորեցնել կանոնաւոր աղօթքի սովորութիւնը, նախ՝ նրան մի բանի դիւրահասկանալի բառեր և ապա աստիճանաբար լիակատար ձևը, որ հիմք ծառայէ ապագայի, որին կարելի է կցել առանձին հայցուած կամ գոհաբանութիւն։ Ամեն մի մայր իր փոքրիկ երեխային կարող է Աստուածաշնչի պատմութեան վերաբերելի պատկերներ ցոյց տալ, և բացատրել երեխայի հասկացողութեան համեմատ։ Ամեն մի մայր իր երեխային կարող է պատմել Յիսուսի կեանքից, և այս պարզ ձևերով դրուում է կրօնի ուսուցման հիմքը։ Այն մայրն որ այսպէս է սկսում, շուտով տեսնում է, որ իր գործն ակնկալածից շատ աւելի հեշտ է ընթանում։ Նա սովորում է իր երեխային ճանաչել ու հասկանալ աւելի լաւ քան որ և է ուրիշ ձևով, և կը-

բօնական խնդիրներում տածած վստահութեան ու համակրութեան սկիզբն է դնում, որ անգին արժէք ունի թէ իրեն և թէ երեխայի համար։

Այս ամենը մատաղ հասակի համար է—դժուարութիւնները շատանում են երեխայի մեծանալուն հետ, թէև ոչ այնպէս որ անյաղթելի լինեն։ Աւելորդ չէ յիշել այստեղ, որ Մայրերի Միութիւնն այժմ 'ի վիճակի է մօր այս աշխատանքին վերաբերեալ մեծագին օգնութիւն ցոյց տալ, թէ գրքերով և թէ խորհուրդներով։ Դիմումը պէտք է լինի կրօնական դաստիարակութեան Կենտրոնական ձիւղի կենտրոնական թղթակցին, և օգնութիւնն ուրախութեամբ ու յօժարութեամբ կը տրուի։ Ինչ որ իսկապէս անհրաժեշտ է մօր համար հասկանալու, այդ այն է՝ որ կրօնի ուսուցումը պահանջում է միայն նաև սիրտ, և նա պատրաստ պիտի լինի իր մասնաւոր կարողութեան բաւական մասը նուիրել այդ բանին, երբ իր

երեխաները մեծանան և կարիք զգան աւելի բարձր ուսման։ Ամբողջ դպրոցական կեանքի ընթացքում, կանոնաւոր կրօնական ուսուցումն կարելի է շարունակել Կիւրակի օրերն ու արձակուրդներին, և հնարաւորութեան դէպքում, աւելի կարևոր է այդ ժամանակը քան մանկական հասակում։ Որովհետև այդ միջոցին է, որ երկբայութեան, անտարբերութեան և անհաւատութեան մեծ ծովի կոհակները միշտ մեր շուրջը ծփալով սկսում են զարնել մեր որդիների ու աղջիկների կեանքերի դէմ։ Մենք այս չենք կարող արգելել, բայց մենք կարող ենք, Աստուծու Սուրբ Հոգու շնորհիւ՝ նրանց կանգնեցնել այնպիսի մի ժայռի վրայ, որից ալիքները չը կարողանան քշել տանել։ Այս անելու համար, մեր իսկ հիմքը շատ ամուր պիտի լինի, ուստի ամեն մայր պէտք է իրեն վարժեցնի ուսումնասիրութեան, խորհրդածութեան ու աղօթքի սովորութիւններին, այնպէս

որ նախ ինքը սովորի այն, ինչ որ ցանկանում է երեխաներն իմանան։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ ՈՑԺԸ։

Եւ երբ որդիներն ու աղջիկներն սկսում են մեծանալ, մօր գործի մեծութիւնն և նրա խորունկ ազդեցութիւնը աւելի ևս պարզւում են նրա առաջ։ Երբ մենք ըմբռնենք թէ մեր ուսուցումն ու ազդեցութիւնն ինչպէս են ներգործում մեր երեխաների կեանքի՝ և ոչ միայն նրանց ու նրանց սերունդի վրայ, որոնց շատերը կը ծնուեն մեզանից յետոյ, այլ և իրենց շրջապատի վրայ, մեր պատասխանատուութեան գիտակցութիւնը բացարձակապէս դառնում է սոսկալի։ Հէնց որ մեր երեխաներն սկսում են խաղալ ուրիշ երեխաների հետ, նրանց ընտանեկան կեանքի մթնոլորտն իր ազդեցութիւնը թողնում է. երբ հասակ են առնում՝ նրանց խօսքերն ու գործերը աւելի ևս ներգործութիւն են ցոյց տալիս դպրո-

ցական ընկերների ու բարեկամների վրայ, և մեզանից ոչ մէկն անդիտակ չէ թէ ինչ աստիճան երիտասարդ մարդիկ ու կանայք իրար կարող են ազդել, թէ լաւ և թէ վատ, իրենց կեանքի ընթացքում։ Ինչքան յաճախ դիտուում է, որ մի երիտասարդ տղամարդ կամ կին—թերևս յատկապէս տղամարդ—որը փաստակար գծեր չունենալով՝ կարող կը լիներ հեշտութեամբ կեանքի մէջ ուղիղ ճանապարհով ընթանալ, սակայն սխալ ուղղութեան հետևող ընկերների մէջ ընկնելով՝ մոլորուում է, քանի որ ընտանեկան կրթութեան բացակայութեան պատճառով, այժ չէ ունեցել իրեն յետ պահելու մոլոր ճանապարհից։ Եւ այսպէս՝ հետևանքն է եղել խորտակուած կեանք ու սրտաբեկ ծնողներ։

Ամենից վեր, ուշադրութիւն դարձնենք, որ մեր ընտանեկան կրթութիւնն ուժեղ լինի. և այս նոյնքան լիովին վերաբերում է կրօնի ուսուցման,

որքան ուրիշ բաների։ Յուշ ածենք, որ մեր երեխաները կը հանդիպեն դժուարութիւնների ու փորձութիւնների, որոնք տարբերուում են մեր տեսածներից որովհետև իւրաքանչիւր սերունդ տարբեր ձևով է մտածում և գործում քան նախորդը։ Կռիւը յաւիտենական է, բայց մղուում է փոփոխուած ուղղութիւններով։ Ինչպէս որ այսօրուայ անգլիացի զինուորը շատ տարբեր զինուորական արուեստ է սովորում հարիւր տարի առաջ սովորածից, այնպէս և Քրիստոսի այժմեան զինուորը պէտք է սովորի ինչպէս պաշտպանել իր կրօնական Հաւատը յարձակման առանձին ձևերի դէմ, որոնք գործում են ներկայ օրերս, և այս պաշտպանութեան արուեստը կարելի է ամենաապահով ու մնայուն կերպով սովորեցնել տնում։ Այն մայրն որ ժամանակ կը նուիրէ կամ կ'ստեղծէ իր երեխաներին կրօնական հաւատի և յոյսի հիմքերի վրայ կանոնաւոր ու յարատև կրթութիւն տալ,

կարող է, այս օրերում իր գործի համար ահագին օգնութիւն ու զեկավարութիւն ստանալ՝ գրքերով ամէն ժամանակ, իսկ դասախօսութիւններով՝ երբ հնարաւոր լինի: Վերևը յիշողութիւն եղաւ առանձին մի ձևի մասին, որով այս օգնութիւնը կարող կը լինին ստանալ, և սրան կարելի է աւելացնել, որ եթէ այս փառաւոր գործը ստանձնի իր իրեխաների համար, միայն նրանք չեն լինել օգուտողները: Այլն իր իսկ հաւատն և յոյսն ուժեղացած կը տեսնէ ամէն ժամում, երբ զբաղուի այս վեհ գործով, և «ուրիշներին ոռոգելով ինքն ևս կ'ոռոգուի»:

Կը գտնուին մի քանիսը, որ ժամանակ չեն ունենալ որոշ ուսումնասիրութեամբ զբաղուելու, բայց այնուամենայնիւ նրանք կարող են մասնակցել երեխայի կրթութեան այս մեծ գործին: Մօր անձնական ազդեցութիւնն և անցուցամոլ գիտակցութիւնն որ նա հոգ է տանում Աստուծու բաների մասին՝

աւելի տպաւորիչ կը լինեն քան իր ասածները. և թող մտաբերէ, որ ամենից մեծագոյն ծառայութիւնն այն է, որ աղօթէ իր խնամքին յանձնուած փոքրերի համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԿԱՐԻՔԸ.

Եթէ Ս. Գրքի մասին մեր ունեցած գիտութեան չափովը գոհ լինենք՝ վատանգ կ'սպասուի: Մենք պէտք է ժամանակակից լինենք թարմ լոյսին ու գիտութեան, որ իւրաքանչիւր տարին երևան է հանում և սփռում մեր ոտների առաջ: «Մինչդեռ գրածից մեզ վեր ու իմաստուն չենք համարում, գոնէ ամենայն փութաջանութեամբ պէտք է աշխատենք այնքան իմաստուն լինել, որ գրածը հասկանանք»: Այս պիտի լինի ամեն կրթուած քրիստոնեայ մօր նշանաբանը, որովհետև այս ձևով կարող կը լինի իր Հաւատը պահպանել խաւարամտութիւնից ու անշարժութիւնից, և իրեն պաշտպանել օրուայ

կրօնական այլանդակ մտածութիւններից, և բացի այդ՝ հզօր ոյժ կը հանդիսանայ երեխաների համար, երբ այդ այլանդակութիւնները կ'սկսեն նեղել նրանց։

Ինչ որ ասուել է անդամակցութեան քարտի վրայ իբրև նախազգուշութիւն վատ ընկերութեան մէջ խառնուելու սովորութիւններից, նաև վատ ընկերներից, վատ զուարճութիւններից, կամ վատ ընթերցանութիւնից՝ մտնում է կրօնի ուսուցման վերնագրի տակ։ Քանի որ յիշեալ բաները մարդկանց ու կանանց հեռացնում են մեր Տիրոջից, և Նրա ուսուցումն արհամարհում, հետևաբար պարտաւոր ենք թէ ինքներս խորշենք նրանցից և թէ մեր երեխաներին սովորեցնենք խորշելու։ Միայն պիտի զգուշանանք, որ մեր ուսուցումն այս կէտում ևս ուժեղ լինի, որ թոյլ պատճառաբանութիւններով (փաստերով) կամ թիւր ուսուցումով չը դիմադրենք այս չարիքի դէմ, հակառակ

պարագայում, օր կը գայ երբ մեր պատճառաբանութիւններն և ուսուցումն կ'ոչնչանան, և մեր երիտասարդ զինուորը թշնամու դէմ անպաշտպան կը թողնուի։ Արդեօք աւելի անգութ բան կարելի՞ է երևակայել, երբ մեզ հաւատացող ու ապաւինող երեխային այնպէս զէնքեր մատակարարենք, որ իրենց ձեռքերը վնասեն երբ միամտութեամբ աշխատելիս լինեն գործածելու։ Սակայն այդ յաճախ է արուում «մտածութեան պակասութիւնից» և ոչ թէ սրտի պակասութիւնից»։

ԵՐՐՈՐԴ ՆՊԱՏԱԿԸ.—ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՑԺԸ.

Երրորդ Նպատակ—«Կազմակերպել ամեն տեղ մայրերի մի խումբ, որոնք պիտի միանան Աղօթքով, և անձնական օրինակով ձգտեն իրենց ընտանիքներին առաջնորդել մաքրութեամբ ու սրբակեցութեամբ»։

Մեր այս երրորդ և վերջին նպատակը բացատրելիս՝ մենք այսպէս ա-

սած, մեզ յանձնուած մեծ գործի մը-
տախտՀութիւնից դառնում ենք դէպի
այն լուիկ ու գաղտնի ոյժերն, որոնք
գործի հիմն են կազմում, և որոնցով
միայն գործը յաջողութեամբ առաջ կը
տարուի—դրանք են՝ Կազմակերպու-
թիւն, Աղօթք և Օրինակ։

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Առաջինի մասին այնքան անՀրա-
ժեշտ չէ խօսել, որովՀետև առածի
շարքն է անցել, որ «Միութիւնն ոյժ
է», և պէտք է բոլորս տեսնենք, որ մեր
առաջադրած նպատակի համար կարիք
ունենք ամեն Հնարաւոր ոյժի։ Միու-
թեան կազմակերպութիւնը դիտմամբ,
Հնար եղածին չափ պարզ է կազմուած,
մինչդեռ նրա թիւն այնքան մեծ է։
Ամենքս գիտենք, որ ընդունելութիւնն
Ընկերութեան մէջ դժուարութեանց Հետ
կապուած չէ, և ճիւղերի համար կարգա-
դրուած ժողովներն ու եկեղեցական
պաշտամունքներն օգտակար են ու գնա-

Հատելի։ Առ այժմ կազմակերպութեան
Հարցից—թէև անՀրաժեշտ—կարող ենք
դառնալ Աղօթքի թաքուն զօրութեան
և Օրինակի լուիկ ոյժի վերայ, առանց
որոնց Մայրերի Միութեան նպատակ-
ները չեն գործադրուել և Ընկերու-
թիւնն ոչ մի արժէք չէ ունենալ որ և
է մէկի համար։ Մայրերի Միութեան
աճումն ուղղակի զարմանալի է, յատկա-
պէս երբ նկատի առնուի, որ նրան ան-
դամակցելու համար՝ դրդում չը կայ,
միայն թէ երբ մէկն իսկապէս հոգ է ա-
նում իր անելիք գործի համար։ Ո՛չ ոք
նրան անդամակցելով աշխարհային օ-
գուտ ձեռք չէ բերում, սակայն, չ՚նայե-
լով սրան, դրա թիւն օրէցօր աճում է,
և մի փոքրիկ տեղում ապրող Մայրերի
մի խմբակի փոխարէն՝ այսօր դարձել է
ամեն աստիճանի և հասակի պատկա-
նող կանանց մի ահագին մարմին, թէ
Մեծն Անգլիայի և Իրլանդիայի մէջ և
թէ արտասահմանում, գտնուելով շա-
տերն որոնք չեն խօսում կամ հասկա-

նում մեր լեզուն. քրիստոնեայ դարձած հեթանոս մայրեր, որոնք խնդագին ընդ-գրկել են, որպէս զի Միութիւնը նպաստէ՝ իրենց զաւակներին քրիստոնէական կրօնի մէջ մեծացնելու: Սրանցից շատերը կան Հնդկաստանում, Աֆրիկայում և Մադագասկարում:

ՄԻԱՑԵԱԼ ԱՂՕԹՔԸ

Սրա բացատրութիւնն ինչ է: Լոկ այն, որ հէնց սկզբից Աղօթքը միշտ առաջ է դրուել, իբրև գործի բացարձակապէս կենսական մասը: Միացեալ աղօթքի մէջ է այդ գործը արմատ ձրգել ու հիմք դրել, և ամեն ակնկալութիւններից ու երազներից վեր՝ այդ Աղօթքը լսելի է եղել: Բայց միտ բերենք, որ չը պէտք է թոյլ տանք, որ միացեալ Աղօթքի այս ոսկէ շղթան, որ շաղկապում է աշխարհի ամեն կողմում գտնուող Մայրերի Միութեան անդամներին՝ խզուի կամ մինչև անգամ թուլանայ: Ամեն մի անդամ պարտակա-

նութիւն ունի տեսնելու, որ իր առանձին օղակն անփսաս ու անվթար մնայ, որովհետև եթէ մի օղակը խզուի, ամբողջ շղթան կը տուժէ: Մեր առանձին Աղօթքի բառերը գործածելիս՝ թող օրական մի. րոպէ կանգ առնենք յիշելու հազարաւոր Մայրերին, որոնց երեսները չենք տեսնելու այս աշխարհում, սակայն ամեն օր աղօթում են մեր և մեր ընտանիքների համար, և նրանց աղօթքները միացած են մերիների հետ Աստուծու գահի առաջ: Եթէ այս բանն անենք, Աղօթքն երբէք չէ դառնալ լոկ ձևական, անփոյթ ձևով ու մեքենայօրէն արտասանուած, այլ կը դառնայ կենդանի ու իրական, «մեր ամենօրեայ կեանքի ջուրը գինի դարձնելով», և մեզ մշտապէս ներշնչելով ոյժ ու կորով, որոնց պէտքն ունենք մեր մեծ գործի համար:

ՕՐԻՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Այո, մեր ամբողջ գործի ամենամեծ

ու ամենադժուար մասն ամփոփուած է մեր վերջին Նպատակի վերջին բառերում. «անձնական օրինակով, իրենց ընտանիքներին առաջնորդել մաքրութեամբ ու սրբակեցութեամբ», որին կարելի է կցել Մայրերի այս նշանաբանը, որ այժմ երևում է Քարտի վրայ. «Ինքներդ եղէք այն, ինչ որ ցանկանում էք, որ ձեր երեխաները լինեն»: Այս բառերը բովանդակում են այն մեծ ճշմարտութիւնը, որ օրինակն աւելի ազդու է քան խրատը, որ անօգուտ խօսք է ասել, որ մեր զաւակներին առաջնորդում ենք դէպի Աստուած, եթէ մենք նրանց հետ միասին չը մօտենանք Նրան, և որ ամենալաւ կարգերն ու ծրագիրները վերջ 'ի վերջոյ անյաջողութեան կը հանդիպեն, եթէ երեխաները հետզհետէ հասակ առնելիս՝ չը տեսնեն, որ իրենց Մայրը հաւատում ու գործադրում է այն, ինչ որ սովորեցրեց նրանց հաւատալ ու գործադրել: Մենք անպատճառ օրինակ

պիտի հանդիսանանք մեր երեխաներին, որոնք իրենց բնութեան մեծ մասը մեզանից են ժառանգում, և անբնական չէ, որ մեր օրինակին են հետևում: Բոլորս կարող ենք տեսնել, որ նրանց կրթելու համար ինչքան այժ է հարկաւոր: Արդեօք միշտ էլ ըմբռնում ենք, ինչ պատասխանատուութիւն կայ մեզ վրայ: Սակայն պատասխանատուութեան հետ մեծ բարիք կայ կապուած, որովհետև երեխաներին կրթելիս՝ Աստուած մեզ էլ կրթում է, և աստիճանաբար առաջնորդում դէպի այնպիսի բարձրութիւններ, որոնց չէինք հասնել որևէ ուրիշ ձևով: Մենք մեր զաւակներին տածած սիրովը, սովորում ենք Նրան սիրել, և երբ օրէցօր համբերութեամբ ու աղօթքով ստանձնում ենք Մայրութեան պարտականութիւնը, կամաց կամաց նշմարում ենք, որ մեր իսկ հոգևոր կեանքը բացւում ու զարգանում է, որ մեր աղօթքներն աւելի իրական են, մեր զղջումն աւելի անկեղծ, Ս. Հաղորդ-

դութիւնն աւելի ներշնչիչ։ Մենք սովորում ենք, որ Աստուած մեզ Իր մօտ է առաջնորդել մեր Մայրութեան միջոցով, և օրհնում Նրան մեզ արած բարութեան համար։

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս ժառանգութեամբ, որն անշուշտ ծպտակար ու սրտապնդիչ է՝ գլքոյկս վերջաւորութեան կարելի է բերել։ Ովքեր որ բաղ բմբռնել են Մայրերի Միութեան բուն նպատակը, և լրջօրէն ու բարեպաշտութեամբ կը խորհրդածեն վերևում շշափած կէտերի մասին, նրա մէջ մի յարմար առիթ կը գտնեն, տնային ու ընտանեկան կեանքում, մի մեծ գործ կատարելու Աստուծու, Պետութեան, իրենց հարազատ զաւակների և աշխարհում գտնուող կանանց համար։ Ինչ բան որ ընտանեկան կեանքը բարձրացնում է իր իսկական բարձրութեան, բարձրացնում է նաև ընտանեկան կեանքում դեր խաղացողներին, և Միութեան գործը թէ ապագայ սերունդի համար է և թէ այժմեան։ Կասկածի տեղիք չը պիտի տանք, որ այսպիսի մի գործ անհրաժեշտ է, քանի որ մեզ շրջապատող չարութիւնները փնաս և մինչև անգամ աւեր են սպառնում մեր ընտանեկան կեանքին։ Աշխարհի տուն շինողներից խնդրում է, որ յառաջ գան և ձեռք-ձեռքի տրուած՝ Աստուծու գործը կատարեն, մեր Պետութեան տները լաւ և ամուր կառուցանելով։ Հին շինողների նման, պէտք է գործենք մէկ ձեռքում գործիք ունենալով, իսկ միւսում՝ զէնք։ «Ամեն իմաստուն կին իր սեպհական տունն է շինում, և ստուգիւ մենք կարիք ունենք այն ամեն իմաստութեան, որ միացեալ Աղօթքին ու Ջանքը կը տան, որպէս զի այնպէս շինենք, որ ոչ անձրև, քամի կամ հեղեղ չը տապալեն և կործանեն ընտանեկան կեանքը, որը բոլոր ազդեցութիւններից ամենաբաւ, ամենամաքուր և ամենաուժեղն է օրօրոցից մինչև գերեզման։

ԱՒՕ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
1960
ՆՈՐ - ՋՈՒՂԱ

ELIO BUCCIGROSSO
LIBRO
MAR. 2014

200

ՀՀ Ազգային գրադարան
NL0030837